


ԲԱՄԲԱՍՈ՞Ղ ԵՍ... ԶԳՈՒՇ

Սատանան բոլորին բերանները չարախօսութեան անօրէն մոլութեամբ լեցուցած է, յարատե կերպով բոլորին բերանները իրենց եղբոր դէմ չարախօսութեամբ եւ նախատինձով կը բոցավառէ: Կը նկատեմ, որ անօրէնութիւն գործող անձերը աներկիւղ են ու չեն փութար գողութեան եւ պողոկոթեան իրենց վատ արարքներէն ապաշխարութեամբ լուացւելու եւ սրբուելու: Եթէ կը գարշիս շնութենէն, ուրեմն գարշէ՛ նաեւ բամբասանքէն: Եթէ շնութիւնը գէշ է, Սատանա՛ւ իմ հաւասարապէս կը դատէ նաեւ բամբասանքը: Բայց առաքելաբար, որ օրէնքը կ'ուսուցանէ, բամբասանքի անօրէնութիւնը շատ աւելի մեծ ցոյց կու տայ, երբ կ'ըսէ. «Ան, որ եղբայրը կը բամբասէ, օրէնքը կը բամբասէ եւ օրէնքը կը դատէ»: Եւ ո՞ր անօրէնութիւնը աւելի գէշ է քան այն, որ փոխանակ Սատանայ օրէնքը գործադրելու, ինքզինք տէր եւ դատաւոր կ'ընէ: Ըսուած է որ օրէնադիրն ու դատաւորը մէկ է, կը փրկէ, կ'ապրեցնէ եւ կորուստի կը մատնէ, իսկ դուն ինչո՞ւ կը դատես ուրիշին ծառան: Տես թէ քանի մահերու պատասխանատու է ան, որ թագաւորին պատիւն ու հեղինակութիւնը կը յափշտակէ եւ դատաւորին դատը անձնապէս ինք կը կատարէ, որովհետեւ Տէրը կ'ըսէ. «Իմա է Կրէժխնդրութիւնը եւ ես պիտի հատուցանեմ»: «Ինչո՞ւ» կը դատես եղբայրդ, կամ ինչո՞ւ գայն կ'արհամարհես»: **Յովհան Մանդակունի ՃԱՌԵՐ**

ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎԻՂԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՆՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ


Եւս առաւել կը յիշատակուին հանգուցեալ հայրապետները եւ եկեղեցոյ շինութեան իրենց մասնակցութիւնը բերող հաւատացեալները:

Ազատութեան մաղթանք եւ աղօթք կը վերառաքուի բոլոր այն եղբայրներուն համար, որոնք կը հեծեն գերութեան մէջ: Այլեւ ներկայ հաւատացեալ ժողովուրդին համար շնորհ կ'աղերսուի:

Պատարագիչ քահանան իր խնդրանքը Աստուծոյ ուղղելով կ'ըսէ.- «Ով Տէր, թոյլ տուր, որ համարձակօրէն դիմենք քեզ, ո՛վ երկնաւոր Հայր, եւ երգածայն աղօթքով ըսենք:

Եկեղեցին կը յորդի դպիրներուն եւ հաւատացեալներուն ...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024 ԹԻԻ 50

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵՆԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ.38.1-8: Երբ. 1.1-14: Ղկ. 17.1-10

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՂՈՐԿԱՍԻ 17.1-10

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման, որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար, որ իր վիզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար, զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ՛ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ՛ իրեն: Նոյնիսկ, եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՛ կը զղջայ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»:


Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վստահ եղէ՛ք, որ պիտի հնազանդի ձեզի»:

Ենթադրենք, որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիտ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. «Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ, անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծէ՞ք, որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէ՛ք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»:

«Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վստահ եղէ՛ք, որ պիտի հնազանդի ձեզի: Հաւատք ունի՛րք Քրիստոսի հանդէպ. եւ նախ քան այս հարցումը, նախ՝ հարց տանք մենք մեզի «Կը ճանչնա՞նք Քրիստոսը»: Քրիստոսը ճանչնալու եւ Անոր հաւատալու միակ աղբիւրը Աստուածաշունչն է: Մեր հոգեւոր ծարաւը յագեցնենք՝ Աստուածաշունչ մատենար կարդալով:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲԵՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ



ՍՈՒՐԲ ԾԱԿՈՐԻ ԿԵԱՆՔԸ

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր և հորաֆրոջ որդին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին: Անոնք միասին դաստիարակւած էին Կեսարիոյ մէջ:

Ան իր քարոզներով, հրաշագործութիւններով և ճգնաւորի խիստ կեանքով՝ նշանաւոր եղած է: Մասնակցած է Նիկիոյ մէջ կայացած ժողովին՝ 325 թուականին:

Մծբինի Աթոռին համար՝ ձեռնադրուած է եպիսկոպոս, ինչպէս Աստուած տեսիլքի մը մէջ յայտնած էր՝ Մարուգէ ճգնաւորին:

Գրած է վարդապետական գատեր, բարոյախօսական գրութիւններ և մատենագրութեան մէջ ծանօթ՝ «Զգօն» գիրքը:

Ս. Գրիգոր Նարեկացին, ներքող մը նուիրած է Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին: Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ «Յաղթող և Սուրբ Հայրապետ» շարականը նուիրած է Ս. Յակոբին:

Այս շարականը գրուած է ա՛յն դէպքին առթիւ, ուր կը պատմուի, թէ Պարսից Շապուհ Բ. Թագաւորը աշխարհածաւալ իր արշաւանքներու ընթացքին՝ կը հասնի Մծբին: Այն առնելով, Սուրբը կ'աղօթէ, և ահա պիծակներու և ձիաստացներու մեծ բազմութիւն մը՝ կը յարձակի պարսիկներու ձիերուն վրայ և անոնք խուճապի մատնուելով՝ կը փախչին, իսկ զինուորները՝ հետիոտն կը նահանջեն:

ՇԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

ԳԻՏԵՒ՞Ր ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

- 1.- Գիշերային ժամերգութիւն:
- 2.- Առաւօտեան ժամերգութիւն:
- 3.- Արեւազալի ժամերգութիւն:
- 4.- ճաշու ժամերգութիւն:
- 5.- Երեկոյեան ժամերգութիւն:
- 6.- Խաղաղական ժամերգութիւն:
- 7.- Հանգստեան ժամերգութիւն:

Վստահաբար կը փափաքիք՝ իւրաքանչիւր ժամերգութեան բացատրութիւնը ունենալ: Անպայման կը խոստանանք յառաջիկայ թիւերուն մէջ, մէկ առ մէկ բացատրել ձեզի՝ բոլոր ժամերգութիւններուն մասին:

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՍԱՐ

Մի՛ հեռանաք իմ օրէնքներէս, որովհետեւ ես եւս հնազանդ զաւակ էի հօրս եւ սիրելի՝ մօրս աչքին, որոնք կը սորվեցնէին ինձի եւ կ'ըսէին . «Մեր խօսքերը սրտիդ մէջ տեղաւորէ՛, պահէ՛ մեր պատուիրանները եւ ապրի՛ր»:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՅԻՍՈՒՍ ԳԻՏԵՒՈՒ ԿԸ ՃԻՆՉՆԱՅ ՄԵՉ

Իրաւ հովիւը կը ցանցնայ իր ոչխարները իրենց ինքնութեամբ: Ահա թէ ինչո՞ւ Յիսուս կը կոչուի «իրաւ հովիւ»: Ան իրաւ հովիւն է, որովհետեւ մեզ կը ցանցնայ մեր աստուածաբոյր ինքնութեամբ և Յիսուսատիպ բնութեամբ, մեզ կը ցանցնայ մեր պակասութիւններով և մեր պակասութիւններէն ազատագրուելու մեր փափաքով, մեզ կը ցանցնայ մեր առաւելութիւններով և զանոնք մեր նմաններուն բարօրութեան ի նպաստ գործածելու պատրաստակամութեամբ: Ան իրաւ հովիւ է, որովհետեւ գիտէ մեր կարիքները և կարող է զանոնք գոհացնել: Իրաւ հովիւ է, որովհետեւ կրնայ խաղաղութիւն տալ մեզի՝ երբ կեանքի մեր նաւը կ'ալեկոծի: Իրաւ հովիւ է, որովհետեւ գիտէ մեր սրտի սէրը գոր ունինք իրեն հանդէպ, և մեր փափաքը՝ իր գիրկը նետուելու:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԳՎԱՐ:

Թանկագին ընթերցող, Յիսուս գիտէ՞ քու մասիդ: Ան շատ լաւ կը ցանցնայ քեզ: Քանի գիտէ ու կը ցանցնայ քեզ՝ ուրեմն, կրնայ սրբել ու բուժել քեզ, բայց կը սպասէ, որ դուն անձամբ բուժում խնդրես իրմէ:

ԱՌԱԿ 7

Որդեա՛կ, պահէ՛ իմ թելադրութիւններս և պատուիրաններս հոգւոյդ մէջ դրոշմէ: Որդեա՛կ, պատուէ՛ Տէրը և գօրացի՛ր: Բացի Տիրոջմէ ոչ ոք է երկիւղ ունեցիր: Որդեա՛կ, պահէ՛ իմ պատուիրաններս և դուն պիտի ապրիս. պահէ՛ թելադրութիւններս աչքիդ բիրին պէս:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹԵԼ ԿՈՒՉԵՍ, ԿԱՐԴԱ՛Վ՝ ՍԱՂՄՈՍ 74

Ինչո՞ւ համար բոլորովին մեկ լքեցիր, ո՛վ Աստուած, բարկութեանդ կրակը մինչեւ վերջ կը թափես մեր վրայ, որ քու հօտդ ենք:

Յիշէ՛ քու ժողովուրդդ, որ սկիւբէն ընտրեցիր, եւ փրկեցիր՝ որպէսպիսի քու սեփական ցեղդ ըլլայ: Յիշէ՛ այս Սիոն լեռը, ուր բնակութիւն հաստատեցիր: Եկուր, բարձրացիր հիմնայատակ այս փլատակներուն վրայ, տե՛ս թշնամիին գործած աւերը սրբարանիդ մէջ: Ոստիներդ տաճարիդ մէջ պողչտացին, իրենց դրօշակները կանգնեցին իբրեւ յաղթութեան նշան: Քարերը կտրտեցին այնպէս՝ ինչպէս փայտահատները կացիններով կը կտրեն անտառին ծառերը: Բոլոր քանդակները փշրեցին տապարաններով ու մուրճերով: Կրակի տուր սրբարանդ, կործանեցին ու պղծեցին քու անունիդ կանգնուած տաճարդ: Իրենց մտքին մէջ ըսին.՝ «Բոլորը միասին քշենք այստեղէն, երկրի մէջ լռեցնենք Աստուծոյ բոլոր տօները»: Իսկ մենք ու քու ներկայութեանդ նշանները ա՛լ չենք տեսներ, չկայ մարգարէ, չկայ մէկը որ գիտնայ՝ թէ ասիկա մինչեւ ե՞րբ պիտի նստէ:

Մինչեւ ե՞րբ հակառակորդը պիտի նախատէ քեզ, ո՛վ Աստուած մինչեւ ե՞րբ թշնամիին պիտի շարունակէ անարգել քու անունդ: Ինչո՞ւ բան մը չես ըներ, ինչո՞ւ վօրութիւնդ ցոյց չես տար, ոչնչացո՛ւր վանոնք:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԷՆ